

ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՆԱԽԱՆՄՈՒՇՆԵՐԸ
/Հարություն Սըվաճյանը՝ Ժանրի ձևավորման
առաջամարտիկ/

1

19-րդ դարի 50-70-ական թվականները հատկանշվում են սուլթանական բռնապետության դեմ հպատակ ժողովուրդների շարունակական ընդվզումներով: Օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդներն իրենց պատմական անցյալով, քաղաքակրթության մակարդակով, հոգևոր-մշակութային ավանդույթներով անհամեմատ բարձր էին կանգնած մահմեդական վաչկատուններից և ձգտում էին ծերբազատվել ռազմաավատական վարչակարգից, նվաճել անկախություն, ապրել արժանավայել... Կայսրության դեմ ապստամբության դրոշը պարզեցին Չեռնոգորիան / 1862 / , Կրետեն /1866-67/, Բոսնիան և Հերցեգովինան /1875/, Բուլղարիան /1876/ ..., Քաղաքակրթությունը ազատության էլեկտրիկը կը զարնե, բռնակալությունը կահաբեկի.- ոգևորված նկատում է „Մեղու,, պարբերականը, - ժողովրդոց իրավունքը հաստատության վճիռ մ'ալ կընդունի, հակառակ ինքնակալներու ահավոր և մարդախոշոշ բանակներուն. ազգաց և ընդհանուր մարդկության բարերար դյուցազունը այս անգամ ավելի մեծ արիությամբ կը նետվին հասպարեզ,¹:

Սուլթանական Թուրքիայի տևական հալածանքի ու թանձր խավարի դեմ ծառանում է նաև արևմտահայ հատվածը. տեղի են ունենում սոցիալական ուժերի աշխուժացում, դեմոկրատիայի վերելք, հոգևոր ու ֆիզիկական լիցքերի կենտրոնացում, հերոսամարտերի կենտրոններ են դառնում Սասունն ու Ջեյթունը, Մուշը, Չարսամեջակն ու Վանը... Հոգևոր զարթոնքը, որն Արևելյան Հայաստանում ծայր էր առել փոքր-ինչ ավելի շուտ՝ կապված քաղաքական կտրուկ շրջադարձի՝ Ռուսաստանին միանալու իրողության հետ/1828/, մի ներքին մղումով մերձեցման էր տանում միևնույն ժողովրդի երկու տարանջատ հատվածներին: Փաղափարական ու շփման ուշագրավ կապեր են ստեղծվում

երկու հատվածների երևելի մտածողների, հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչների միջև, ծայր է առնում ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, որին առանձնահատուկ լիցքեր էին հաղորդում առաջավոր հրապարակագիրներն ու գրողները, մամուլի գործիչները... „Այն թանձր և խավարատեսիլ ամպերը, որ դարերով ահա հավաքվելով և լեռնանալով պատել էին հայկական բարոյականության հորիզոնը, այսօր Յուսիսսփայլի ճառագայթների տակ, նկատում ենք փարատված. անցան գիշերային մորիկները, և փլիխոսփայական ծանրաչափը / բարոմետրը / զուշակում է մի գեղեցիկ առավոտ,,²,- այսպես պատկերավոր է բնութագրել „Յուսիսսփայլ„, ամսագրի դերը Միքայել Նալբանդյանն իր „Հիշատակարանում...„: Արևելահայ գործիչներին լավ էին հասկանում նաև արևմտահայ դեմոկրատական հոսանքի մտածողները՝ Հարություն Սըվաճյանը, Կարապետ Փանոսյանը, Սերովբե Թազվորյանը, Մատթեոս Մամուրյանը, Գրիգոր Զիլինկիրյանը և մյուսները, որոնք համախմբվել էին „Մեղու,, „Ծաղիկ,, „Մյուսատիի էրճիաս,, / „Շեփոր այգաբացի,, / „Միություն,, , „Ձայն,, պարբերականների շուրջը: Միք. Նալբանդյանի առաջին անգամ Պոլիս գալու / 1860 թ. մայ. 20 / առթիվ Հ. Սըվաճյանը „Պ. Միքայել Նալբանդյան,, հոդվածում ջերմորեն ողջունում է նրա այցը, գիտակցում, որ այն կարող է մի յուրօրինակ կամուրջ հանդիսանալ հայության երկու հատվածների միջև՝ արևելահայերին իրենց „գործակից ընելու,, ճանապարհին. պ. Նալբանդյան մեր մեջը Ռուսիո լուսավորյալ ազգայնոց ներկայացուցիչն է և անշուշտ իր դարձին պիտի պատմեն իր հայրենակցացը թե ի՞նչպես հայերը հոս անքուն կը մնան. մեր իղծերն ու ջանքերը անոնց հասկցնելով զանոնք ալ մեզի գործակից ընելու պիտի աշխատի. որպեսզի միևնույն հողի վրա եթե չկրնանք միանալ, զոնե միանանք սըրտով ու տենչանոք, երկրով ու կրոնքով վարատական հայքս. և օր մը աշխարհ տեսնեն, թե հայ ազգ մը կա, որ թեև ցրված ու աստանդական, այլ մի է բարոյապես և անբաժանելի,,³:

2

19-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության, հասարակական մտքի ու ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ բացառիկ տեղ է

գրավում „Մեղու,, հանդեսը, որի խմբագիր-տնօրեն Հարություն Սըվաճյանը / 1831-1874 / հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ էր, կրակոտ հրապարակախոս և տաղանդավոր երգիծաբան։ Նրա մասին հիացմունքով են խոսել ժամանակակիցներն ու հաջորդները՝ սկսած Միք. Նալբանդյանից ու Մատթեոս Մամուրյանից մինչև Հ. Պարոնյան ու Ե. Տեմիրճիպաշյան, Ծերենց ու Հր. Ասատուր... Պետրոպավլովյան բերդի նշանավոր կալանավորը՝ Միք. Նալբանդյանը, 1864-ին գրած „Ազգային թշվառություն,, հոդվածում չափազանց բարձր է գնահատում Սըվաճյանի „Մեղուն,,՝ այն համարելով „երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը , ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը,,⁴, իսկ „Ուղերձ...,, բանաստեղծության մեջ դիպուկ բնութագրում է Սըվաճյանի քաղաքական դեմքն ու վաստակի էությունը։

„Հայոց Դիմոկրիտ ես:- „Հայկական նամականիում,, հիացած բացականչում է Մամուրյանի Ծերենց-Շամիլը:- Բայց չէ թե անզգա, մարդաստյաց Դիմոկրիտն, այլ հրահանգիչ, մարդասեր անձ մ'որու հոգին հայերու վշտաց վրա լալու ատեն՝ շրթունքն անոնց թերությանց վրա կծիծաղին, գրիչը մոլություններ կհարվածե և մոլիները տարտարոս կղրկե,,⁵։ Տաղանդավոր ուսուցչին շատ բարձր է գնահատել իր համձարեղ սանը՝ գովեստների մեջ այնքան ժլատ ու „անառակ գրիչ,, ունեցող Պարոնյանը, որը նրան անվանել է քաջ ու մեծ, „ազատախոս գրիչներուն առաջինը,, , մարդ, որն անզամ „մահվան անկողնույն մեջ ազգային գործերու վրա խոսիլ կ'ուզեր, երբ բարեկամի մը այցելությունը ընդուներ. մեծ հույսեր կտաներ իր սրտի մեջ և նորեն ասպարեզ իջնելով՝ մնացած օրերն ազգին ծառայությանը նվիրել կ'ուխտեր,,⁶։ „Եթե պետք տեսներ, օդին մեջ կը բարձրանար, նույն իսկ խլուրդներու մեջ կը խառնվեր, որդերն ու մրջյուններն իսկ չէր արհամարհեր կյանքը ուսումնասիրելու համար,,⁷ , - այսպես դիպուկ է ներկայացրել Սըվաճյանի „Մեղուն,, Հր. Ասատուրը։ Իր բնույթով լինելով „հավաքածո՝ բարոյական, բանասիրական, գրագիտական, տնտեսական, առևտրական և զվարճալի գիտելյաց,, հանդես՝ „Մեղուն,, մեծ չափով ուղղորդել է 50-60-ական թվականների գրական շարժումն ու գեղարվեստական ճաշակը։ Պարոնյանից առաջ Սըվաճյանն է խորապես հասկացել երգիծանքի դերն ու նշանակությունը

և „Մեղվի,, 1857-ի 13-րդ թվում այսպես է բանաձևել իր նպատակադրումը. „Ես ալ միտքս դրած եմ բարեկրթության հորդորանքը բարոյականի վրա խոսող անձերն քաղած ատենս, մեր ազգին անհատական պակասություններ ալ ծաղրելով պարսավեմ, որպեսզի ընթերցողներուն մեջն ամեն մեկը իր պակասությունները ճանաչելով ինքզինքը ուղղելու ջանա, վասնզի եթե քիչ շատ զվարճակի կերպով չըլլա, աղեկ գիտեմ, որ զանի կարողացողները շատ քիչ պիտի ըլլան և անոնք ալ ծանծրանալով պիտի կարդան,,:

Որտեղի՞ց է ծնվում այս հայացքը, ինչպե՞ս է ձևավորվում երգիծաբանությունը: Պատասխանը մեկն է՝ 50-60-ական թվականների պայքարի բովում, հասարակական-քաղաքական մեծ զարթոնքի, մաքառման ու վերելքի մթնոլորտում մեծանում է ծիծաղի, անողոք մերկացումների դերը: Երգիծանքը դառնում է հոգևոր պայքարի ազդեցիկ զենք՝ ուղղված նախապաշարված անցյալի, սոցիալական ներհակությունների, կղերաամիրայական հետագմա գաղափարախոսության և ընդհանրապես բռնակալության դեմ: Այն իր մեջ ամենից առաջ պարունակում է բողոք, սոցիալական կյանքի զոհերի, ճակատագրից հալածվածների բողոքը՝ ուղղված մարդկային անկատար հարաբերությունների և աղաղակող անարդարությունների դեմ: „Աղքատությունը սոսկալի երգիծաբան է,- գրել է Դ. Պարոնյանը,-Լուկիլիոսեն, Օվրատիոսեն, Զոբնադեն շատ ավելի ազդու կը խոսի նա. կը խարազանե, կը հաղթե,- և վերջապես կ'սպաննե այն ամեն մոլություններն, որ երգիծաբան գրիչներու շնորհիվ այսօր բազմածին կը լինին, կ'աճին, կը բազմանան և կը տարածվին,,⁸: Հասարակական-քաղաքական կյանքում կատարվող տեղաշարժերն ու դեմոկրատական ուժերի և, ինչպես Սըվաճյանը կասեր, „գիշերադեմ մարդկանց,, միջև տեղի ունեցող կատաղի պայքարը պարարտ հող են ստեղծում ծիծաղի համար, որն սկսում է հազվագյուտ ուժով հայտնաբերել անշրջելի դարձող ճշմարտությունը: „Ծիծաղը ոչ թե արտաքին, այլ էապես ներքին ձև է,- նկատում է Մ. Բախտինը,- որը չի կարելի փոխարկել լռության՝ առանց ոչնչացնելու և աղարտելու ծիծաղի բացահայտած բուն ճշմարտության բովանդակությունը: Այն ձերբազատում է ոչ միայն արտաքին գրաքննությունից, այլև ամենից առաջ ներքին մեծ գրաքննիչից , սրբությունների, ինքնիշխան արգելքի, անցյալի,

իշխանության նկատմամբ մարդու մեջ հազարամյակներով արմատակալած վախից»⁹:

Ուշագրավ է, որ իր գրական-հրապարակախոսական կյանքի ճանապարհին Սըվաճյանը զնալով առնականացրել է ծիծաղի բնույթը, կենսափորձով հասկացել, որ ժամանակաշրջանը թելադրում է բացահայտել բուն ճշմարտությունը, և ընտրել դրա վերհանման ամենահարմար ձևը: „Այս երկու տարվա / 1856-58 - Ա. Ս. / փորձերը մեզ թելադրեցին՝ զվարճալի հոդվածներուն ավելի ընդարձակ ասպարեզ մը բանալ Մեղուին մեջ, - „Մեղվի, 1859 թվականը թևակոխելու առթիվ գրած „Ներածություն,, առաջնորդողում դիտում է Սըվաճյանը: Նա այնուհետև հատուկ ընդգծում է ծիծաղի դաստիարակիչ, մաքրագործող նշանակությունը, այն, որ երբ որևէ մեկին „իր պակսությունը զվարճալի կերպով երեսին տրվի՝ խնդալով կամչնա իր ըրածեն ու երկրորդ անգամ նույն հանցանքով բռնվելու կզգուշանա՝ ուրիշին ծիծաղը իր վրան շարժելու վախճալով. և կը փափաքի, որ ուրիշ ատեն ինք ալ զինքը ծաղրողներուն վրա խնդա,,¹⁰:

Ազնիվ է երգիծաբանի նպատակը. նրա ծիծաղն իր էության մեջ պաշտպանում է արդարությունը, ճշմարտությունը. „Մեր միտքը Մեղուն պաշտպանելը չէ, վասն զի անի կրնա իր փեթակը ապաստանիլ, և իր խայթոցովը իր թշնամյաց դեմ դնել, մենք արդարությունը կուզենք պաշտպանել.....¹¹: Սըվաճյանն ընդգծում է, որ „Մեղուն ծնած օրեն մինչև հիմա հարսնիքին տունը լալն ու մեռելին գլխուն վերև խնդալը սովորություն ըրած ըլլալով, այս սովորությունը իրեն բնություն մը եղեր է ու ալ չկրնար... ազգօգուտ ձեռնարկությանց արգելք եղողներուն վրա սրտացավ ազգասերներուն հետ ինք ալ լալ. հապա պիտի խնդա և պիտի խնդա,,: Այստեղ ուշագրավը նաև այն է, որ տաղանդավոր սկզբնավորողի՝ երգիծանքի ուժի գիտակցումը հետագայում իմաստախոսությունների պիտի հասցներ հանճարեղ Պարոնյանը. „Մոլություններու վրա ծիծաղին առաքինության ճանքուն վրա գտնվիլ կ'ենթադրե և, այս հաշվով, որչափ շատ ծիծաղ քաղեն՝ այնքան նվազ մոլություն պիտի գտնեն,, , կամ՝ „Ես արտասուքի հետ գործ չունիմ և չեմ փափագիր ունենալ, թույլ տվեք ծիծաղներուն ինձի գալ, զի անոնց է այս աշխարհիս արքայությունը,,¹²:

Ինչպես տեսնում ենք, կարևորագույն քայլը կատարված էր. „Հայոց առաջին երգիծաբանը / Ա. Չոպանյանի բնորոշումն է / ¹³ հայտնաբերում է ծիծաղի ներգործումն ուժը և ուղիներ որոնում այն մարմնավորելու համար: Սկզբնական շրջանում նրա երգիծանքը շոշափում է առավելապես կենցաղային խնդիրներ. ծաղրվում են նորաձևությունն ու օտարամոլությունը, շաղակրատանքը, բամբասասիրությունը, որկրամոլությունը, պճնասիրությունը... „Սեղվի,, հենց առաջին համարում սպանիչ ծաղրով երգիծվում է թեթևասլիկ ու օտարամոլ դատարկապորտը / „Օկյուսթ-Կինեն /, այնուհետև մի քանի թիվ հետո երգիծաբանի դիպուկ նետերի տակ իր բարոյական մահն է ստանում տգետ ու սնամեջ, ծույլ ու անբան հայ երիտասարդը / „Հարուստ երիտասարդի մը սենյակը,, /, խարազանվում են տգիտությունը, խավարամտությունն ու սնահավատությունը / „Կեշը կեշով տեֆ կ'ըլլա,, /, օտարամոլությունը / „Հայերեն խոսելու զանազան կերպեր,, /, նորաձևությունն ու պճնասիրությունը / „Այս ամսուն մոտաներ,, /, շատախոս ու որկրամոլ միջնորդ կինը / „Մանկասարին հարսնիքը,, /, պոլսահայ մեծատունի տգիտությունն ու ամբարտավանությունը / „Լրագիրներուն գինը կանխիկ է,, /, շահասիրությունը / „Հոգաբարձու մը ըլլայի,, /, բթամտությունը / „Կիները մարդ չեն,,¹⁴ և այլն:

Հետաքրքրական է, որ Սըվաճյանի երգիծանքում հրապարակախոսությունն ու գեղարվեստը հանդես են գալիս մի տեսակ զոդված, գիրկընդխառն, և այդ ճանապարհին կենդանի կյանքի ընթացքը հեղինակին թելադրում է ոչ միայն նոր թեմաներ, այլև գրական զանազան ձևեր ու արտահայտամիջոցներ՝ արծակի տարբեր տեսակների ուրվագծեր, երգիծական մանրապատումներ ու երկխոսություններ, զրույցներ, պատմվածքներ, նովելաձևեր... Այստեղ Սըվաճյանը դառնում է ուսուցիչ: Գիշտ է նկատված, որ „Մանկասարը, Թագուկ հանըմը և մնացյալ երկրորդական դեմքերը այն նախատիպերից են, որոնք, հետագայում, գեղարվեստական մեծ ընդհանրացումներով, մշակվում են հայ գրականության մեջ Հ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Եր. Օտյանի կողմից, դառնալով մեր գրականության հանրահայտ հերոսները,,¹⁵:

Նկատելի է, որ արևմտահայ կյանքում տեղ գտած արատավոր երևույթների քննադատությունը հատկապես բնորոշ է Սըվաճյանի ստեղծագործական կյանքի առաջին շրջանին /1856-60/: Մեծ կյանքի բովում՝ կենսական շարժման մեջ, նա աստիճանաբար անցում է կատարում դեպի սոցիալ-քաղաքական խնդիրները, ասելիքը մարմնավորելու համար որոնում գրական նորանոր ձևեր. ծնվում են ֆելիետոններ ու պամֆլետներ, կատակերգություններ ու երգիծական բանաստեղծություններ՝ հագեցած քաղաքացիական և գաղափարական ցայտուն շեշտավորումներով: Այստեղ, սակայն, մեզ առավել հետաքրքրողը գրական դիմանկարի ժանրի ասպարեզում Սըվաճյանի կատարած նախափորձերն են:

3

Դիմանկարի ժանրի սաղմնավորման, խմորումների տեսակետից ուշաբժան է, որ Սըվաճյանը „Մեղու,, երգիծաթերթի հենց առաջին թվում „Անվանի տղայք. ներածություն,, ոչ այնքան համառոտ ծանուցման մեջ խոստանում է հանդեսի հաջորդ համարից սկսած թարգմանաբար տպագրել „բարեպաշտ, ողջախոհ և իմաստուն,, Միշել Մասոնի „Անվանի տղայք,, վերնագրով 52 „կենսագրությունները,, , որոնք հեղինակն իր գրքում բաժանել էր 8 խմբի /„Թագավոր տղայք,, , „Մարտիրոս տղայք,, , „Բարեպաշտ տղայք,, , „Ժրաջան տղայք,, , „Քաջասիրտ տղայք,, , „Բանաստեղծ տղայք,, , „Գիտուն տղայք,, , „Ճարտարարվեստ տղայք,,/: „Այս հիսուն երկու անվանի տղայոց պատմությանը մեջ հեղինակը չար և բարի մարդոց վարքը և գործքը այնքան լավ կը նկարագրե, անոնցմե այնքան պարզ ու առողջ բարոյականներ կը հանե,- գրում է Սըվաճյանը,- որ տղայոց բարերարություն մը ընելու նպատակով գրած ատենը, ամեն վիճակի և ամեն հասակի մարդկան զվարճալի հետաքրքրական և օգտակար գիրք մը շինե. իր ոճը ազդու, վառվռուն և վսեմ. իր խոսքերը ավելի սիրտերու հետ են քան թե աչքերու ու ականջներու հետ, ինչպես որ պիտի տեսնենք՝ հաջորդ թիվեն սկսելով,,¹⁶: Եվ ահա „Մեղվի,, հաջորդ և հետագա թվերում սկսում են տպագրվել իրն ու նոր աշխարհի „երևելիների,, „կենսագրությունները,,/„Էդուարդ Դ-ի տղաքը,, , „Եվդոքսիա. արևելյան կայսրուհի,, , „Հովհաննա Կրեյ,, , „Իվան Զ,, , „Հովաս,, ,

„Լյուդովիկոս ժե,, , „Նաբոլեոն Բ,, և այլն,,¹⁷: Ինչպես տեսնում ենք, օտար նշանավոր գործիչների ներկայացվող „զվարճալի,, „կենսագրությունները,, ենթադրել են բարոյախրատական նպատակներ, սակայն հետաքրքրությունից զուրկ չէ նաև այն հանգամանքը, որ դրանք Սըվաճյանի ստեղծագործական տարերքի մեջ կարող էին նպաստել գրական դիմանկարի ժանրի մտահղացմանը, „կենսագրությունից,, կարող էր ճեղքվել երգիծական դիմանկարը, ինչպես դա հետագայում պատահեց „Ազգային ջոջերի,, հեղինակի՝ ֆրանսիական „Պոլիշինել,, երգիծաթերթից 1874-ին կատարած թարգմանությունների ճանապարհին: „Օտար ազգաց մեջ իրենց գործերովն երևելի հանդիսացած անձերն մեր ազգայնոց ալ ծանոթացնելու նպատակավ,- ծանուցում է Պարոնյանը,- այսօրվնե կսկսինք անոնց երգիծական կենսագրությունը գաղղիերենն թարգմանելով թերթերնուս մեջ հրատարակել,,¹⁸:

Չ.Սըվաճյանի երգիծական դիմանկարների՝ իբրև նախա-պարոնյանական շրջանի ուշագրավ փորձերի, բանասերներն անդրադարձել են հպանցիկ և բավարարվել են լոկ ընդհանուր դիտարկումներով: Այսպես, Ալիս Մանուկյանը նշել է. „Թե՛ Չամուռճյանի և թե՛ Գալֆայանի երգիծական դիմանկարները արժեքավոր են իբրև նախափորձեր Պարոնյանի „Ազգային ջոջերի,,¹⁹: Իսկ Գրիգոր Սարգսյանը գրել է. „.... սրամիտ ու ոչնչացնող ծաղրով է ներթափանցված „Պ. Չամուռճին աշխարհես վերնա նե՝ տեղը ո՞վ դնենք,, վերնագրով պամֆլետը, որը մի կողմից ծայնակցում է Նալբանդյանի „Երկու տողին,, , մյուս կողմից ասես նախապատրաստում Պարոնյանի „Ազգային ջոջերի,, համանուն դիմանկարների ծնունդը,,²⁰:

Դիտելի է, որ ժանրային բնութագրումների հարցում գրականագետների կարծիքները հիմնականում միաբևեռ են. Չամուռճյանին և Նար-Պեյին նվիրված դիմանկարների ուրվագծումները համարվել են հոդված-պամֆլետներ: Ինչ խոսք, Սըվաճյանի ստեղծած դիմանկարային երեք նախափորձերը / „Մեծ Քիթ մը,, , „Պ. Չամուռճին աշխարհքես վերնա նե՝ տեղը ո՞վ դնենք,, և „Խորեն եպիսկոպոս,,²¹ / , ինչ-որ չափով հրապարակախոսական են՝ հենված իրական փաստերի, վավերական իրողությունների ու կոնկետ անձերի գործունեության վրա, բայց և այնպես

դրանք միևնույն ժամանակ գրական դիմանկարների ինքնատիպ ուրվագրումներ են, որոնք փայլում են նաև գեղարվեստական ընդհանրացումներով: Շատ հաճախ իրական փաստերն աննկատելիորեն փոխակերպվում են պատկեր-գաղափարի, պատկեր-գործող անձի, իսկ վերջինում՝ նաև պատկեր-երկխոսության, և աստիճանաբար բարձրանում է գեղարվեստականացող կերպարը՝ իր բնորոշ „դիմագծով„: Այդ ամենին գումարվելու է զալիս երգիծական տարերքը՝ միախառնված, այսպես կոչված, թե՛ „հրապարակախոսական պամֆլետի,, և թե՛ „գեղարվեստական պամֆլետի,, տարրերին: Միանգամայն իրավացի է գրական ժանրերի տեսաբանը՝ Հասմիկ Մարգունին՝ գրելով, որ „պամֆլետի ու նրան „ազգակից,, երգիծական մյուս ժանրերի միջև որոշակի սահման չկա: Սա բացատրվում է ժանրի իրոք սինթետիկ բնույթով, որ օգտվում է ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական և նույնիսկ հռետորական միջոցներից: Չէ՞ որ պամֆլետում՝ շատ կարևոր է ապացույցների բնույթը՝ մեղադրանքների անառարկելի, տրամաբանական, համոզիչ լինելը: Սակայն բոլոր այս միջոցները, ինչպես և խոսքի պաթետիկությունը, լեզվի սրությունը, փաստերի, թվերի, փաստաթղթերի օգտագործումը գեղարվեստական պամֆլետում ծառայում են երգիծական պատկերավորությանը,,²²:

Արվաճաղի հողված-պամֆլետներում ամենից առաջ ակնառու է գրական դիմանկարի առանձնահատկություններից մեկը՝ սեղմ ձևի մեջ „բնորոշ,, բնավորության ու գործունեության ամենաեական հատկանիշների վերհանումն ու խարազանումը:

60-ականների սկզբի ազատագրական պայքարի բովում ցայտուն ընդգծվել էին դեմոկրատներն ու հետաշարժները, բարեկամներն ու թշնամիները: Արևմտահայերի Սահմանադրությունը, չնայած իր սոսկ կուլտուրական ու կրոնական բովանդակությանը, ավելի շատ արևմտահայոց ներքին կյանքը տնօրինալուն միտված օրենքների ժողովածու լինելուն ու „թլփատվածությանը,, , իրականում այն կիզակետն էր, որի շուրջ բախվում էին հասարակական-քաղաքական միանգամայն տարբեր ու իրարամերժ հոսանքները: Հովհաննես Չամուռյանը, Գաբրիել Այվազովսկին, Գրիգոր Տեյխրմենճյանն ու ամբողջ Պողոսյան շարժումը դեմ էին Սահմանադրությանը,

Բարձրագույն Ղռան սաղդանքներով ազգադավ ճիգեր էին անում վիժեցնելու դրա կիրարկումը: Ավելին, արևմտահայ հետադիմության պարագլուխը՝ տխրահամբավ Յովհ. Չամուռճյանը, բացերև գնում էր մատնության՝ „կայսերական կառավարության բարձրաստիճան պաշտոնեից միտքը արթնցնել,, ուզելով, երբ գրում էր, թե „Սահմանադրությամբ միևնույն տերության մեջ երկու կերպ կառավարություն ընդունել կըլլա. որով ժանրակշիռ է, կըսե, այսպես տերության օրենքն տարբեր օրենքով հպատակ ազգի մը կառավարության արտոնություն մը շնորհվիլը „²³:

Այդ „անվեղար կաթողիկոսը,, հոգևորական չէր, դեռ ջահել օրերից դիմադրել է հոգևոր աստիճան ընդունելու առաջարկներին, սակայն ժամանակին վայելել է „խորագետ աստվածաբանի,, , „լուսավորյալ բարեպաշտի,, , „գնայուն մատենադարանի,, , կրոնադավաբանական խնդիրների ու եկեղեցու համաշխարհային պատմության քաջահմուտ գիտունի համբավ: Ինչպես վկայում է կենսագիրը՝ Դ. Սրմբյանը, Յովհաննես Տեր-Կարապետյան Տերոյենց Չամուռճյան Պրուսացի բազմանուն Պատվելին „տիրած էր 10-15 լեզուներու, լափած էր հազարներով գիրք, գրած էր հարյուրներով ալ. կը մաքառեր ու կը հաղթեր հռոմեական ու բողոքական աստվածաբաններու և հրեա ռաբբիներու. ուներ նաև սոսկալի՝ բան՝ դներու գիտությունը, վարժապետած էր կաթողիկոսներու և, խայթիչ գրողի մը /Դ. Սըվաճյանի-Ալ. Մ./ խոսքով, ինք անվեղար կաթողիկոսն իսկ էր ազգին.....²⁴: Պավանաբանական սուր վեճերի ժամանակ նրա աջակցությանն էին դիմում կրոնական բարձրագույն մարմինները, Տերոյենցին իրենց հովանավորության տակ էին վերցրել ճարտարապետ մեծահարուստ ամիրաները՝ Պալյանները²⁵:

Կրոնական մոլի միստիցիզմով զինված այդ ռեակցիոն գաղափարախոսն իր հրատարակած պարբերականներում՝ „Հայաստան,, /1846-48, 1850-52/, „Ձոհալ,,/1855-56/, „Երևակ,,/1857-66/, չքուլացող եռանդով պաշտպանում էր մայրամուտ ապրող ավատատիրական հասակարգը, դիմակայում ազգային զարթոնքին ու ժողովրդի սոցիալ-քաղաքական պահանջներին: Բազմաթիվ են հատկապես „Երևակի,, էջերում ամիսներ շարունակ տպագրվող ինքնուրույն կամ ֆրանսիացի աստվածաբան Ժեհան դը

Սեն-Քլավիանից թարգմանված այն հոդվածները²⁶, որոնց մեջ պատմվում են ինչ-որ դևերի գոյության, նրանց չարության մասին, այն „ամմարմին գոյացությունների,, գոյության, որոնք „աշխարհիս մեջ պատահած գործերուն ալ կը խառնվին,,: „Ղև չը կա ըսելը Տեառն մերո մարմին առնելուն և փրկարար խաչելությանը պատճառը վերցընել է,- համոզված ճամարտակում է Պատվելին,- և պատճառը վերնա նե՝ գործն ալ կը վերնա. մեկ մարդ մը որ միտքը հաստատությամբ դրած ըլլա որ դև չկա, և բնական տրամաբանության ձիրք ալ ունենա, հետևութենե հետևություն մինչև Տեառն մերո մարդեղությունը, խաչելությունը և հարությունը ուրանալու կը հասնի,,²⁷:

Ծիծաղելի է ու անհեթեթ: Պոլիս ժամանած Միք. Նալբանդյանի ուշադրությունից չվրիպեց պոլսահայ ամիրաների և հետադեմ հոգևորականության այդ գաղափարախոսը: Նա Չամուռճյանի դեմ սկսեց հայտնի բանավեճը՝ նախ „Հրաշափառ խայտառակություն,, պամֆլետով, ապա շարունակեց նշանավոր „Երկու տողում,,: Կարդալով Պատվելու „Ապացույցք ավետարանական պատմության,, հոդվածը, ուր հեղինակը գտնում էր, թե ժխտել դևերի գոյությունը կամ կախարդությունը՝ նշանակում է ժխտել նաև քրիստոնեական կրոնը, Նալբանդյանը նրան պատասխանում է „Հրաշափառ խայտառակություն,, պամֆլետով: Լուսավորյալ ժամանակներում Տերոյենցի քարոզած միջնադարյան սխոլաստիկան համարում է „հոգեկան հիվանդության,, արտահայտություն և գրում. „Որպես հայ, ամոթահար զայրանում ենք, որ այս ժամանակում հայ մամուլից արձակվում են այսպիսի ցնորաբանությունք: Մինչև ե՞րբ պիտի խայտառակվին և յուրյանց հետ պիտի խայտառակեն հայ մամուլը, մեր այս դևընկալ իմաստունքը. կարծենք թե ժամանակ էր արդեն սթափելու միջին դարերի արբեցութենից,,²⁸: Տերոյենցի նկատմամբ իր վերաբերմունքը Նալբանդյանը շատ ավելի խստացրեց „Երկու տող,, պամֆլետում՝ հայ հրապարակագրության փայլատակումներից մեկում: Հրապարակախոսը սթափորեն ցույց տվեց, որ Տերոյենցը „յուր փտած ու վաճառված գրիչով,, ձգտում է պատմել կանգնեցնել դեմոկրատիայի ու առաջընթացի ուժերի դեմ, պաշտպանում է միջնադարյան խավարամտությունը և, „գտանվելով երկրագունդի վերա, ապրում է շատ հեռի նորա մակերևույթից,,:

3. Սըվաճյանը ևս նախաճանաչական դիրքերից մեծ պայքար է ծավալում Տերոյենցի դեմ: „Սեղվի,, էջերում տեղ են գտել երգիծական բազմաթիվ հոդվածներ, մանրապատումներ, ուր անողոք ծաղրի է ենթարկված Պատվելին²⁹: Այս առումով հատկապես ուշագրավ են „Չքնաղ հյուրընկալություն,, , „Պ. Չամուռչյանի գործունեությունը,, և „Չամուռչյանին զեկուցում,,³⁰ հոդվածները: Դրանցից առաջինում, ուր „հեզնական ձևը,, հմտորեն միահյուսված է տրամաբանությանը, Սըվաճյանը գրում է, որ Միք. Նախաճյանը թեև կարիք չունի պաշտպանության, բայց ինքը „պ. Նախաճյանին գրած նույն հոդվածին /„Նամակ „Սեղուի,, խմբագրին,, - Ալ. Մ./ ամեն մեկ տողին, ամեն մեկ բառին պատասխանատու ու պաշտպան,, է: Երկրորդ հոդվածում հեղինակը դարձյալ երգիծախառն ոճով ծաղրում է „Երևակ,, հանդեսի և նրա խմբագրի ունայնատությունը, քաղաքական ստրկամտությունն ու ազգադավությունը: „Երեսդ ճերմակ, պատվելի՛, Դուդայի մոմին պես...-սարկաստիկ շեշտերով դառնացած բացականչում է հրապարակախոս-երգիծաբանը: Սըվաճյանը նկատում է հետադիմական ուժերի համագործակցությունը, այն, որ մի ժամանակվա թշնամիները՝ Չամուռչյանն ու „Արևելյան դար,, կիսամայա հանդեսի խմբագիր Տեյիրմենճյանը, „այս միջոցին իրարու հետ շատ սիրաքվորեր են և իրարն չեն կրնար կոր զատվի,,:

Իսկ „Չամուռչյանին զեկուցում,, հոդվածում հեղինակը փորձում է Չամուռչյանին բացատրել, որ զուր են նրա և նրա համախոհների ջանքերը՝ թշնամություն սերմանելու հայոց մեջ, քանի որ, միևնույն է, ազգն ազատագրվում է քաղաքական նիկիից. „Գիտցիր, որ խավարյալ ըսվածներն ու լուսավորյալ ըսվածները խավարյալ ու լուսավորյալ ըլլալեն առաջ հայ եղած են և դուռն իրջափ աշխատիս, օր օրի անոնք իրարու պիտի մոտենան և դուռն քու մեկ քանի ներշնչողներուդ և ներշնչյալներուդ հետ միմակ պիտի մնաս միշտ հեռու քու հայրենակիցներեդ և ատելի միշտ անոնց,,:

Հովհ. Չամուռչյանի դեմ Սըվաճյանի ուղղած հրապարակախոսական-հոդվածային քննադատությունն սկսում է զեղարվեստականորեն հանդերձավորվել երգիծական դիմանկարի ստեղծման նախափորձերում՝ դիմանկար-ուրվագծերում: Հեղինակը խնդիր չի դրել տալու Չամուռչյանի

գործունեության համապարփակ բնութագիրը. բավարարվել է միայն էական առանձին հատկանիշների ընդգծմամբ: Այդ ճանապարհին նա Պարոնյանի գրական ասպարեզ իջնելուց շատ առաջ՝ դեռևս 1862-ին, գիտակցել է երգիծական դիմանկարի հասարակական ներգործուն մեծ ուժը և գտել, որ „քնորդի,, անգամ ուրվագիծը իրեն հատուկ սեղմ, կոնկրետ ոճով ու երգիծական արտահայտչամիջոցներով կարող է դառնալ պայքարի հարմար զենք. „Չամուռճիին ուրվագիծը տեսնելով՝ հարկավ ամեն մարդ անոր ուրվականն անգամ սոսկաց,,³¹:

Ահա „Մեծ Քիթ մը,,³² դիմանկար-ուրվագիծը: Հեղինակը հենց սկզբից Չամուռճյանի արտաքին նկարագրությամբ բացահայտում է նրա խավարամտությունը, կրոնական մոլեռանդությունը: Այստեղ ձևի կոմիզմն արտահայտվում է արտաքինի կոմիկական դրսևորման միջոցով. ձևի արտասովորությունը ծնում է գրոտեսկի հասնող կոմիզմ, որն էլ իր հերթին ձգտում է կեցության առանցքային հակասությունների ամբողջական արտահայտման: „Երևակի,, 1862 թ. 116-117-րդ համարներում Չամուռճյանը „մեղվականների,, և ընդհանրապես „լուսավորյալների,, դեմ տպագրել էր հոդվածներ՝ փորձելով „լուսավորյալներուն միջոց ուտել,,: Եվ ահա Աղվաճյանը, օգտագործելով Չամուռճյանի „լուսավորյալները,, „քիթերնին իրենց չրհասկըցած բանին մեջ կը խոթեն, և տարապարտ վեճեր և կռիվներ կը բանան,, արտահայտությունը /ընդգծումն իմն է - Ալ. Մ./, իր գլխավոր նշանակետն է դարձնում Պատվելու քիթը՝ կիրառելով մերթ զմերթ բառախաղը /Չամուռճյանը „քիթին ոխը քիթով առնել ուզեր է./, մերթ գրոտեսկը, որն առաջին հայացքից թեև թվում է սրամիտ ու զվարճալի, սակայն էության մեջ ունի մերկացման անողորմ ուժ՝ ուղղված հասարակական-քաղաքական մի ամբողջ հոսանքի խավարամտության դեմ: Պատվելու դեմքն այլանդակվել է „Մեղվի,, թունավոր խայթոցներից. „Պ. Չամուռճիին քիթը մեծցեր էր, վասն զի մեղու մը անցած տարի անոր վրա նստավ, կճեց, շուտ մը քիթը ուռեցավ, քիչ ատենի մեջ ահագին մեծություն մը ստացավ և այս այլանդակ ուռեցքը տեսնողները չըկրցին ծիծաղմին բռնել, հարկ եղավ Պարոնին կիսատ ձգել իր հրապարակախոսությունը և քթին դեղ ընել... ուստի պարտավորեցավ զայն տղմին մեջ ընկղմել,,³³:

Առերևույթ պահպանելով զուսպ ոճը՝ հեղինակը շարունակում է գծագրել իր գաղափարական հակառակորդի երգիծական դիմանկարը, մարդու, որն ապարդյուն ճիգեր է անում՝ պատասխանելու „լուսավորյալների“, օրեցօր ստվարացող բանակին. Պատվելին չի կարող „հազար կտոր լինել, , , , հարյուր հազար կտոր ալ ըլլա չըկրնար հասնիլ անոնց,,: Սըվաճյանը հատուկ ընդգծում է, որ նոր բարձրացող դեմոկրատական ուժերն աչքի են ընկնում իրենց համառությամբ, գաղափարական նպատակամիտված պայքարով, մակաբույծներին ասպարեզից հեռացնելու անկոտրում կամքով. „...լուսավորյալները, ինչպես ինք կը կոչե զանոնք, իրենց անվան զորությամբը հարկավ ըրածնին թողածնին կը տեսնեն, գիտեն և կը հասկընան, և անանկով ոչ թե մինակ քիթերնին՝ տեսած, գիտցած, հասկըցած և համոզված բանին մեջ կը խոթեն, այլ գլխով ոտքով անոր մեջը կը մտնեն և անկե դուրս չ'են ելներ մինչև որ իրենց խումբովը անոր մեջեն ստամոքս խառնըվցնող ճանճերը բոլորովին հալածեն,“³⁴:

Հեղինակը, սեղմ ձևի մեջ օգտագործելով ժողովրդական բանահյուսությունից առանձին բեկորներ, աստվածաշնչյան ասույթներ, հիպերբոլիկ փոխաբերություններ ու համեմատություններ, ընդհանուր համապատկերում բարոյապես լիովին ոչնչացնում է Չամուռճյանին՝ ակնարկելով նաև նրա կապը աղայական-ամիրայական խավի հետ. „Պ. Չամուռճյան իր քիթին թո՛ղ նայի որ շարունակ երկար ատեն տղմին մեջեն դուրս չ'ելներ. ուրեմն տիղմին վեր թո՛ղ չ'ելնե, „կոշկակարն ցկոշիկս,“ և պարապ տեղը՝ լուսավորյալներուն միսը ուտել թո՛ղ չըփործե, վասն զի անոնք ինքզինքնին աղեկ պատսպարած են: Թե որ Պատվելին անոթի է նե՝ անվանի հարուստներունը թո՛ղ երթա ուտե ու շատանա և հոն լայնարծակ բազմելով՝ տափկուկ տափկուկ ասոր անոր համար չըգրաբանե, որպես զի անոնց հետ զբաղած ատենը չ'ըլլա որ մեղուն այս անգամ ալ գա բերանը կճե և ուռած տիկ դարձունե զանի,“³⁵:

Դժվար չէ նկատել, որ Սըվաճյանը հաճախ է օգտագործում տիղմ բառը՝ ակնարկելով Պատվելու՝ Չամուռճյան անգգանվան ծագումնաբանությանը, որը նշանակում է տիղմ, ցեխ, կեղտ³⁶:

Ստեղծագործական գյուտ է դիմանկար-ուրվագծի վերջնամասը, հեղինակը, ընդհանրացնելով Չամուռեյանի՝ դիվապաշտության բարձրացած խավարամտությունը, դիվային չարամտությունը, խավարամոլ էությունն ու կրոնական մոլեռանդությունը, կոմիկական այսպիսի առաջադրություն-խրատ է տալիս նրան. „Ի վերջո օգտակար խրատ մ'ալ կու տամք մեր պատկառելի Պատվելիին որ իր թերթերը լեցնելու համար Դևերուն գոյությանը վրա թող ճառե միայն, թեպետ և քանի որ ինք կա՝ անոնց գոյությունը ապացուցանել հարկ չըկա. վասն զի ինք կենդանի վկա է անոնց գոյությանը և չարությանը և ոչ ոք կը տարակուսի անոնց վրա, վասն զի „ի գործոց ձերոց ծանիցեն զձեզ մարդիկ...“³⁷:

Ուշագրավ է, որ Հովհ. Չամուռեյանին տրված սվաճյանական այս բնութագրումը Պարոնյանը 1879-ին ինքնատիպ խմբագրումից հետո հմտորեն ձուլում է „Հովհաննես Տերոյենց,, դիմանկարին՝ օգտագործելով ալոգիզմի ամենաբնորոշ դեպքերից մեկը՝ վերացական պնդումների վրա հենված կոմիզմը. „Յուր ծննդյան հետևյալ գիշերը ծնան դևերն, որոնց գոյությունն այն թվականեն ի վեր հաստատված ճշմարտություն մ' է: ... Դևերու գոյությունը ուրացողները հերետիկոս կը հռչակվեին, և ինք ամեն ճիգ կը թափեր դևերու գոյությունն հաստատել յուր գոյությամբը, և, որ զարմանալին է, դատը միշտ կը վաստկեր...“³⁸: Ինչպես տեսնում ենք, անմիջական ազդեցությունն ակնհայտ է, սակայն այդ հանգամանքը բնավ ստվեր չի նետում համճարեղ երգիծաբանի վրա. գրական ազդեցությունները բնական ու անխուսափելի երևույթներ են յուրաքանչյուր գրողի ստեղծագործական ճանապարհին. էականը դրանցից ծնված և բյուրեղացված արդյունքներն են: Պարոնյանն ուշադրությամբ հետևում էր նախորդների գործունեությանը, բաժանում էր նրանց համոզումները և քաջագիտակ էր գրական ժառանգությանը: Այդ իսկ պատճառով նա չի վարանել դիմելու իր ուսուցչի 17-ամյա հնություն ունեցող „Սեծ Քիժ մը,, պամֆլետին և փոխառելու նրա դիպուկ բնութագրումները: Պատահական չէ, անշուշտ, որ „Հովհաննես Տերոյենց,, դիմանկարի վերջնամասում ամփոփելով Չամուռեյանի „կենսագրությունը,, Պարոնյանը վերջինին պատկերել է մեջքի վրա պառկած և ձեռքին գիրք բռնած, ճակատին

դրոշմված կրոնը բառը, դևերի խմբով շրջապատված, իսկ „Քթին վրա միշտ կը բզզա մեղու մը և երբեմն կը խայթե,,³⁹:

Հաջորդ՝ „Պ. Չամուռնին աշխարհքես վերնա մե՛ տեղը ո՞վ դնենք,, դիմանկար-ուրվագիծը, գեղարվեստական արժանիքների տեսակետից և երգիծական հնարանք մերի ու միջոցների բազմազան կիրառություններով նոր որակ է սվաճյաճական գրական դիմանկարի ժանրի ստեղծման ճանապարհին: Ձվարթ ոճը, շրջասությունները և չափազանցությունները, սրամիտ հարցադրումներն ու կոմիկական գուշակությունները, դրության կոմիզմը, բառախաղերն ու տրամաբանական անսպասելի շրջադարձերը ծառայում են երգիծական պատկերավորությանը, և թանձր վրձնահարվածներով այս դեպքում ևս կերպավորվում է „խավարը լույսեն ավելի սիրելով՝ անոր մեջ թաղված-մնացած,, Պատվելին:

Հեղինակը դիմանկարն սկսում է արտաքուստ լրջությամբ ու թվացյալ մտահոգությամբ՝ ի՞նչ կլինի, եթե „պ. Չամուռնին աշխարհքես վերնա,, , ո՞վ կարող է արդյոք փոխարինել նրան: „Ասիկա խիստ կարևոր խնդիր մըն է որ այժմեն շատերուն ուշադրությունը կը գրավե,,⁴⁰ , - „անհանգստացած,, շարունակում է երգիծաբանը: Արտաքին լրջության քողի տակ, սակայն, շուտով զգացնել է տալիս ոչնչացնող ծաղրի տեսակներից մեկը՝ հեզմանքը, որի ուժն ու ազդեցիկությունը թերևս հենց սառնության ու լրջության մեջ է: Քանի որ Պատվելին „չորս միլիոն ազգին *եզակյան* մարդն է,, , շատերն են անհանգստանում, որ վշտի մեջ կշիթթվեն և իրենց անելիքը կմոռանան. „Պ. Տեր Կարապետյանը, Աստված տա երկար ապրի, բայց որովհետև մահկանացու է, ինչպես ինք ալ կը հավատա, օր մը պիտի մեռնի հարկավ և աշխարհքես վերնա. վասն զի արդեն բավական տարիքն առած է, ինչպես կ'ըսեն. ուստի երբ Աստուծո անդամնալի վճիռը իր վրա կատարվի՝ չորս միլիոն ազգին այս *եզակյան* մարդը ո՞ր պիտի կորսըվի: Անոր համար քանի որ հիշյալ Պարոնը դեռ կենդանի է, կ'ապրի, շատերը իրեն համար այսօրվընե կը մտածեն. վասն զի անոր հրաժարման իրենց ազդելիք մեծ ցավը այժմեն զգալով՝ կը վախճան որ ցավի ու կսկիծի մեջ չըկրման հայնժամ ըստ արժանվույն մտածել անոր վրա ու անհոգ կենան,,:

Հեզնական շեշտադրումներով հազեցած արտաքին լրջությանն այնուհետև փոխարինելու է գալիս մերկացումների անողոք մտրակը՝ սատիրան՝ այս անգամ արդեն մի դեպքում սրամիտ կալամբուրներով /,.,Հիրավի այսպիսի *եզական* անծ մը ամբողջ ազգի մը հոգնակի վիշտեր կու տա և իրոք մեծ վիշտեր,./, որով և ցովում է Պատվելու բացառիկության միֆը, մյուս դեպքում թվացյալ գովեստների ու դրանց հակադրություն պարսավանքների տրամաբանական անսպասելի շրջում-զուգորդումներով, որոնք էլ իրենց հերթին բացահայտում են կղերաավատական հոսանքի պարագլխի ունայնամտությունն ու անտաղանդությունը, խավարամոլությունը, խառնակչությունը... „Ըստ որում Հովհաննես Պատվելին իր ուշիմությամբը, հմտությամբը, գիտությամբը, իմաստությամբը, գերբնական հանճարովը, գերադրական տաղանդովը, հարուստ քանքարներովը, փարթամ գաղափարներովը, առատ և անհամ գրություններովը, անիմաստ թարգմանություններովը, ցուրտ զվարճաբանություններովը, պաղ կատակաբանություններովը, դատարկաբանություններովը, ճամարտակություններովը, ճոռմաբանություններովը, զրաբանություններովը, վերջապես իր անհեթեթ զխոսվը ազգիս մեջ *միակ, անզույգ*, և ստույգ *եզական* մարդ մեղած է:

Պ.Պուրսացին այս ամեն հատկություններովը, կատարելություններովը, հանած գրգռություններովը, լարած որոգայթներովը մեծ համբավ ստացած է, և ամենքը մատով կը ցուցնեն այս տարօրինակ անձը, և երբեմն ալ ավելի հարգելու համար, մատներուն վրա կ'առնեն զանիկա,,:

Պատվելու դիմանկարային շտրիխներին ավելանում են նաև անզուսպ կրոնամոլության ու կաթոլիկությանն անդուլորեն ծպտյալ հարելու ակնարկումները. „Պ. Տերոյենց ասոնց ամենուն հետ զխավորապես քաջ աստվածաբան է, ուսյալ 'ի կրոնս և 'ի հավատս, առաքինի և բարեպաշտ, մեծահավատ և բազմահավատ, բայց ոչ անհավատ, վասն զի ինք շատ հավատքներ գիտե և կը քարոզե, ինչպես որ պիտի տեսնենք,,:

Դիմանկար-ուրվագծի սկզբնամասի սեղմ, բայց չափազանց խիտ ու հատու վրձնահարվածներն աստիճանաբար վերածվում են հեղինակի խոստացած որոշ վավերական մերկացումների ու վիճաբանական բացահայտումների, որոնք միտվում են ամբողջացնելու երգիծական կերպարը:

Եվ հետաքրքրականն այն է, որ այդ հատվածներում ևս հրապարակախոսական ոճն ու դատողությունները գրեթե բոլոր դեպքերում ստվերվում են երգիծական պատկերավորության ու նախապես լավ մտածված գեղարվեստական կառույցի չթուլացող լույսից:

Հատկանշական է, որ հեղինակը Չամուռճյանին տված յուրաքանչյուր պատկեր-բնութագրում սկսում է նրա տարբեր անվանումներով. ներառյալ խորագիրը՝ հաջորդաբար հինգ անգամ թվարկվում են „դեղնկալ իմաստունի,, բազմահարկ անունները՝ պ. Չամուռճի, պ. Տեր Կարապետյան, Հովհաննես Պատվելի, պ. Պրոսպի, պ. Տերոյենց, ապա այնուհետև մեկտեղվում են բոլոր անունները, և շարունակվում են հեզմախառն անողոք դիմակազերծումները. „Արդ՝ այս ամեն անունները հոս ամփոփելով, Հոհաննես Պրոսպի/Սըվաճյանը նախընտրել է այս անվանաձևը - Ալ. Ս./ Տեր Կարապետյան Չամուռճյան Տերոյենց բազմանուն Պատվելին յուր 'ի կրոնս և 'ի հավատս ունեցած ծայրահեղ իմաստությամբը տեսնելով, դիտելով, նկատելով որ ազգիս մեջ օր օրի կրոնքը կը խանգարի և հավատքը կը թուլնա ամենուն քով, որով տակավ առ տակավ բողոքականության մոտենալով Հռովմա Ս. Աթոռեն կը հեռանան, /տես իր նախկին Երևակները/, իր սրբազնյալ հոգին չըհանդուրժելով ասոնց և իբրև 'ի վերուստ պաշտոն և հայլուստ պարզև առած՝ ձեռք զարկավ ազգը այս ապագա վտանգեն ազատելու և ուղղելու,, :

Շուտով պարզվում է նաև „պ. Չամուռճիին ուրվագիծը,, գրելու շարժառիթը. ինչպես նկատում է Սըվաճյանը, Պատվելին մի զարմանալի եռանդով իր „Երևակի,, 1862թ. դեկտեմբերի 1-ի թվով վերստին „լուսավորյալներուն միսը ուտել փորձեր է,,։ Ինչու՞: Հեղինակը խորաթափանց հայացքով հայտնաբերում է բուն պատճառը. ազգային դպրոցներն այլևս չեն գնում Պատվելու „Քրիստոնեական վարդապետություն,, գիրքը և ոչ թե այն պատճառով, որ „լուսավորյալների ծախողակի խորհրդով,, վերացված է քրիստոնեական ուսմունքը, ինչպես պնդում է Չամուռճյանը /քա՛վ լիցի, „ԼՈՒՄԱՎՈՐՅԱԼՆԵՐԸ *անհավատ* չ'են կրնար ըլլալ,,/, այլ պարզապես „Պ. Պրոսպիին շինած *Քրիստոնեական վարդապետությունը* չ'են կարդացուներ կոր,,։ Եվ ահա „քաջ աստվածաբանը,, առանց հաշվի առնելու, որ շուտով Կրոնական ժողովն իր „Քրիստոնեական վարդապետությունը,, իբրև դասագիրք

կհանձնարարի դպրոցներին, և դրան կնպաստի Սահմանադրության մեջ ամրագրված ուսումնական խորհրդի որոշումը. ածապարանքով աջ ու ահյակ ապերախտորեն սուր է ճոճում, կրոնի պատրվակով „ուղղափառության տեղ չարափառություններ,, քարոզում՝ ստոր պայքար ծավալելով իր գաղափարական հակառակորդների դեմ: Եվ երգիծաբանը սարկաստիկ շեշտադրումներով, արդեն առանց որևէ քողավորման կամ զվարթ ոճի իրերը կոչում է իրենց անուններով...Իժ մըն է այս հրեշը որ միշտ իր թույնը թափել կ'ուզե անմեղներուն վրա և իր ականջները խցելով իրեն դեմ ըսվածները չը լսեր և գլուխը կախած իր փորձեն ետ չըկենար: Իր փորձն է ամեն անգամ դաժան բերանը բանալուն կամ ժանտ գրիչը ձեռք առնելուն՝ կրոնքի պատրվակով հարմար անհարմար քաշկըռտելով քաշկըռտելով ասոր անոր, ուզածին *անհավատ* ըսել⁴¹:

Դիմանկարի վերջնամասում հնչում է սկզբի „անհանգստացնող,, հարցը՝ ի՞նչ կլինի, եթե պ. Զամուռնին աշխարհի երեսից վերանա: Զաջորդում է սրամիտ պատասխան-եզրահանգումը. ոչինչ էլ չի պատահի. պարզապես պետք է նրա տեղը բաց թողնել. նա տխուր վրիպակ է...Ուրեմն դժար նա մանավանդ անկարելի է մեզի հիմա որ անի աշխարհես վերնալեն ետքը անոր տեղը մեկը դնել մտածենք կամ մեկը կարենամք գտնալ անոր տեղը անցնելու. ասոնք անկարելի բաներ են, ուրեմն ավելորդ է ասոր վրա միտք հոգնեցնելու, ուստի բաց կը թողունք անոր տեղը և վերին Նախախնամությանը կը հանձնենք որ անոր տխուր հիշատակները մեր մտքեն բոլորովին ջնջե և մեր ազգին մեջ անոր տեղը բռնելու մարդ չըհարուցանե վասն զի ասի անգամ էվել կուզա կոր,, :

Այսպես, ահա, Միք. Նալբանդյանի հետ միաժամանակ և Զ. Պարոնյանից առաջ Զ. Սըվաճյանի երգիծական գրչի տակ իր բարոյական մահն է ստանում ազգային զարթոնքն ու առաջընթացն ատող և չղջիկի պես խավարում խարխափող Պատվելին⁴²:

Զ. Սըվաճյանը լուրջ տարածայնություններ է ունեցել նաև արևմտահայ մի ուրիշ նշանավոր գործչի՝ Խորեն Նար-Պեյի /Գալֆայան/ հետ: Դրանք երևան են եկել թե՛ գաղափարական և թե՛ գրական ոլորտներում: Սըվաճյանը, „Քրիստոսի եկեղեցիին բաժանումը և պապականությունը, դոկտոր Շիշմանյան

և Տեր խորեն եպիսկոպոս,, հողվածում /1871/ ներկայացնելով Նար-Պեյի մասին „թե՛ հրատարակությամբ և թե՛ հրապարակավ եղած բազմաթիվ ամբաստանությանց զլխավորները,, , շարադրում է մեծահամբավ կրոնավորի անցած կյանքի արատավոր ուղին և մատնանշում նրա գործունեության նեղ ամձնական, փառասիրական բնույթը: Ռեալիստական գրականության պաշտպան Սըվաճյանին խորթ էին նաև Նար-Պեյի երկերում երևան եկող բռնագրոսիկ պատկերները: Այսպես, դրականորեն գնահատելով հանդերձ „Ալաֆրանկա,, կատակերգության թեմատիկ արդիականությունը, դեռևս 1862-ին քննադատել է հեղինակի պահպանողական մտայնությունը և հատկապես ճշմարտությունից հեռանալը, այսինքն՝ անբնականությունը. „Ըստ մեզ՝ ինչ որ ճշմարտության դրոշմը չունի, մեր առջևը անոր իրական արժեքը շատ նվազ է,,⁴³:

Տասը տարի հետո „խորեն եպիսկոպոս,, երգիծական մանրապատման մեջ Սըվաճյանն արդեն փորձում է գծագրել Նար-Պեյի գրական դիմանկարը: Այն ևս ստեղծված է հեզմախառն ոճով. ամենուր զգացնել է տալիս հեղինակի արհամարհական վերաբերմունքը փառասեր ու պաշտոնատենչ եպիսկոպոսի նկատմամբ: Դիմանկարում հիշատակված իրական փաստերն այստեղ նույնպես անտեսանելիորեն փոխակերպվում են պատկեր-գործող անձի, պատկեր-երկխոսության: Սըվաճյանը հարազատ է մնում իր ոճին. սկզբնամասի արտաքին լրջության քողի, դրվատանքի ու գնահատանքի խոսքերի տարափի տակ, թվում է, դափնեպսակ է հյուսուում մի մարդու շուրջ, որին „Աստված դրկեց, որ մեր ազգին այսպիսի ընդհանուր անտարբերության միջոցին այսպիսի ահագին ալեկոծության մեջ ազգին նավը խաղաղության նավահանգիստը տանի մտցընե,,⁴⁴: Նա նամակներով և լրագրական ծանուցումներով երեսփոխաններին ժողովի է հրավիրել Ղալաթիայի խորհրդարան, որպեսզի „հոս Ազգային Քաղաքական ժողովի անդամոց թվույն և ընտրության եղանակին վրա եղած տարբեր կարծիքները միացընեն և սա ազգակործան խնդիրին վախճան մը տա,,: Թվում է՝ ազնիվ է նպատակը, խայրենասիրական ու անանձնական: Բայց շուտով հեզմական լրջության հանդիսավոր, գովաբանական բնույթից ճեղքվում ու հորդում է անողորջ սատիրան՝ անակնկալ հայտնաբերելով երևույթների արտաքուստ

անճկատելի, պատահական կապերը և իր դառը վճիռը արծակելով խոսքի ու գործի աղաղակող հակասությամբ շաղախված անուղղելի փառասերի նկատմամբ: „Մեկ քարով քառասուն ընկույզ թափել,, ուզող եպիսկոպոսը մտահոգված է ոչ թե ժողովրդի թշվառ վիճակով, այլ ազգի կողմից ծնծղաների ու դափնեպսակների արժանանալու մոլուցքով.

„Ուրեմն կեցցե հոորեն եպիսկոպոս – ծափ զարկեք թշվառականներ:

Չըտեսա՞ք որ հոորեն եպիսկոպոս գործին մեջ մտնելուն պես ի՞նչպես շուտ մը լմնցավ գործը....

Հա՛ հա՛ հա՛ հա՛.....

Բայց ինչու՞ կը խնդաք, ի՞նչ կըլլա եղբր գործը չըլմննալով:

Հոորեն եպիսկոպոսի ալ հոգն ա՞յն էր կը կարծեք որ գործը լմննա: Անի ուրիշ փափաք և ուրիշ հասկնալիք ունեք. փափաքը այն էր որ ժողովուրդը իմանա թե հոորեն եպիսկոպոսեն զատ ազգին մեջ, ազգին վրա մտածող մարդ չըլկա: Հասկընալիքն ալ այն էր թե քանի՜ երեսփոխան պիտի գտնըվին արդյոք, որ իր հրավերին հնազանդելով, անսալով, պիտի գան իր շուրջը նստին և զինքը իրենց Նախագահ պիտի ընտրեն,,⁴⁵: Պարզվում է, սակայն, որ եպիսկոպոսի հրավերն ընդունել են սոսկ չորս երեսփոխաններ, և Մեչուխեչա-Սըվաճյանը նրան կարծես մխիթարելու համար ասում է, որ „մյուս երեսփոխանները այն օրը մեռած էին, անոր համար չգացին.չէ՛ նե ո՞վ կը հանդգնի անոր հրավերը մերժելու,: Ո՞րն է այստեղ դրության կոմիզմը. այն, որ ազգային խնդիրների նկատմամբ էությամբ անտարբեր փառասերը հայրենասիրական ճառեր է արտասանում մի նպատակով, որ „ժողովուրդին մեջ իր վրայոք շատ խոսվի,, , իսկ այդ հանգամանքը նկատվում է շրջապատի կողմից,և հեղինակը միմյանց հակադիր իմաստներ արտահայտող բառերի կողք կողքի համադրմամբ ստեղծում է կոմիկական իրավիճակ. և պայթում է ծիծաղը. „հոորեն եպիսկոպոս ելավ երեսփոխանները հրավիրեց որ ժողովուրդը իր վրա խոսի. ժողովուրդը միմակ խնդաց: Ընդհանուր ժողովին մեջ խնդրույն վրա խոսելեն ետքը ելավ ազգին ապագային վրա իր ունեցած իղծը, բաղձանքը, փափաքը, տենչանքը...

Մեչուխեչա.- անտարբերությունը....

Թշվառական, լռե.

հայտնեց. իրավամբ մարդը ծափահարություն մը սպասեց:

Բերանները բաբսացին բայց ձեռքերը չըխոսեցան,,:

Փառասեր վեղարավորը նաև ցուցամոլ է. չխրատվելով մի քանի օր առաջ պատահած խայտառակությունից՝ կիրակի օրը մի ազդեցիկ էֆենտու՝ Մոռթման պատվելու ուղեկցությամբ պտույտի է դուրս գալիս Դյունքար-Իսկելեսիի դաշտավայրը՝ „ժողովուրդի բազմության ինքզինք ցուցնելու,, համար, բայց „անպիտան ժողովուրդը հոն ալ չը ծափահարեց զանի,,: Պատճա՞ռը. նա այլևս կշիռ չունի ժողովուրդի աչքում:

„-Ասկե ետքը աբբա Մարկոսն ալ ըլլաս՝ հավտացողին խերն անիծենք,, - լսվում է նրա հետևից:

Ինչ խոսք, Դ. Սըվաճյանի դիմանկար-ուրվագծերը չեն դիմանում գեղարվեստական խիստ քննության, հեռու են կատարելությունից, երգիծական դիմանկարի ժանրային առանձնահատկությունների առումով էլ պակասավոր են: Սակայն դրանք ժամանակաշրջանի հասարակական պահանջների թելադրանքով ստեղծված նախանմուշներ էին, որոնք չէր կարող անտեսել նրա անմիջական հաջորդը, իր իսկ խոսքերով բնորոշած՝ „ազգին անկուտի ծառայելու հատկությունն,, ունեցող Դակոբ Պարոնյանը: Զե՞ որ, ինչպես պատկերավոր նկատում է գրականագետ Գ. Գասպարյանը, Սըվաճյանի առաջ քաշած „դրույթները „Մեղու,,-ի ծովում նմանվում են մի արշիպելագի, որի կղզիները թեև ճանապարհորդին երևում են փոքր-փոքր հեռավորությամբ, միմյանցից անջատ՝ ցրված վիճակում, սակայն և այնպես, ամբողջությամբ վերցրած, հանդիսանում են առանձին օղակները ընդծովյա մի հրաբխային լեռնաշղթայի: Այդ կղզիների խումբը հենց տեսանելի ապացույցն է այդ լեռնաշղթայի գոյության՝ ծովի հատակում,⁴⁶: Իսկ այդ լեռնաշղթան արդեն տեսանելի լեռնապարի վերածեց հայ ժողովուրդի ծիծաղի հանճարը՝ Պարոնյանը, որի „ստեղծագործական կյանքի արևելյան հորիզոնում Սըվաճյանն է կանգնած, իսկ արևմտյան հորիզոնում՝ նրա արժանավոր հաջորդը՝ Երվանդ Օտյանը և այլ հետնորդներ,,/Ա. Ասատրյան/⁴⁷:

Աղբյուրներ և ծանոթագրություններ

1. Հարություն Սըվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, Հայպետհրատ, 1980, էջ 345:
2. Սիբայել Նալբանդյան. Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 103:
3. Հարություն Սըվաճյան, Հրապարակախոսություն, էջ 127:
4. Սիբայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 4, 1983, էջ 293:
5. Մատթեոս Մամուրյան, Երկեր, Երևան, „Հայաստան“, հրատ., 1966, էջ 814: Ծերենց-Շամիլ կեղծանունը վերծանել ենք մենք „Մատթեոս Մամուրյանի դիմանկարները“, հոդվածում Խոն Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու., , ք. 4, Երևան, „Ասողիկ“, հրատ., 2001, էջ 19-21:
6. Հակոբ Պարոնյան. Երկերի ժող. տասը հատորով, հ. 9, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 23-24:
7. Հրանտ Սաստուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 130-131:
8. Հակոբ Պարոնյան , Երկերի ժող. տասը հատորով, հ. 6, 1968, էջ 361:
9. Михаил Евдоким, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, Москва, изд-во „Худ. лит.“, 1990, с.107-108:
10. Հարություն Սըվաճյան, Հրապարակախոսություն, էջ 54:
11. Նույն տեղում, էջ 60:
12. Հակոբ Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 4, 1965, էջ 375-376, 499:
13. Տեն „Անահիտ., ամսագիր, Փարիզ, 1903, հունիս-հուլիս, ք. 6-7, էջ 85:
14. Տեն „Մեղու., , 1856, քք. 1,4, 1857, քք. 13, 22, 1859, քք. 3,6,9,12, 15,21,36, 1860, ք. 106:
15. Ալիս Մանուկյան, Հ. Սվաճյանի երգիծանքը „Մեղվի“, էջերում, „Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ., , Երևան, 1957, ք. 3, էջ 74:
16. „Մեղու., , 1856, ք. 1, 15 սեպտեմբեր, էջ 17:
17. Տեն նույն տեղում, ք. 2, 8 հոկտեմբեր, էջ 35-40, ք. 3, 15 հոկտեմբեր, էջ 54-80, ք. 4, 31 հոկտեմբեր, էջ 82-88, ք. 5, 15 նոյեմբեր, էջ 103-109, ք. 6, 30 նոյեմբեր, էջ 126-130, ք. 7, 15 դեկտեմբեր, էջ 176-181 և այլն:
18. „Թատրոն., քաղիր, Կ. Պոլիս, 1874, ք. 3, 13 ապրիլ:
19. Ալիս Մանուկյան. Մշված հոդվ., էջ 80:
20. Գրիգոր Սարգսյան, Սըվաճյանը հրապարակախոս-երգիծաբան, Երևան, „Սովետ. գրող“, հրատ., 1981, էջ 65:
21. Տեն „Մեղու., , 1862, ք. 154, 28 փետրվարի, էջ 47, ք. 157, 31 մարտ, էջ 69-71, 1872, ք. 87, 3 հունիս:
22. Հասմիկ Մարգունի, Ալեքսանդրյան գրականության ժանրերը, „Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը., , Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 457:
23. Հարություն Սըվաճյան, Հրապարակախոսություն, էջ 152:
24. Հ. Գ. Սրմոյան, Տասնևիններորդ դար և Հովի. Պրուսացի Տերոյենց, Կ. Պոլիս, Զարդարյան գրատուն, տպագր. Սազայան, 1908, էջ 14:
25. Կարապետ Պալյան ամիրան Տերոյենցին ցմահ նշանակել էր ամսական 10 ոսկի թոշակ / Տեն նույն տեղում, էջ 95-96/:
26. Տեն „Երևան., , տետրակ կիսամյա, Կ. Պոլիս, 1861, ք. 113, 1 սեպտեմբերի, էջ 137-143, ք. 114, 16 սեպտեմբերի, էջ 169-177, ք. 115, 1 հոկտեմբերի, էջ 209-216... 1862, ք. 121, 1 հունվարի, էջ 3-10, ք. 122, 16 հունվարի, էջ 32-42 ...

